

**Սիրելի եղբայրներ, ամեն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր՝ խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացընէ (Յակ. Ա. 16-20):**

Սիրելիներ, ցանցնալ ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի զրկուիմք, երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուիմք, զգոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանանք բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատաղի գագանէ մը: Չըլլայ, թէ իժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ մեր հոգիներուն, իսայթէ մեր կրունկը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները վրէժխնդրութեան բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ պէտք էր շոտագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գագանի նման անընտելի եւ վայրենի՝ բոլոր տեսնողներուն ծաղրանքի առարկայ ըլլալ: Օձերու եւ կարիքներու բնութիւնն է միշտ գագանութեան մէջ մնալ, որոնք՝ որու որ մօտենան կը գարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ստելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը զինէ գանձմէ սպաննելու: Անոնց մի նմանիք դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բնութեամբ ունին գագանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն, սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ՝ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէն դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գագանութեան:

**Ի՞նչ է Սարկաւագին պաշտօնը:**



Սարկաւագը սպասաւորն է Սուրբ պատարագի Սեղանին: Ան միջնորդն է ժողովուրդին եւ պատարագիչ քահանային միջեւ: Իր պարտականութիւններն են՝ խընկարկել, Աւետարան կարդալ, վերաբերում կատարել, ժողովուրդը առաջնորդել Աստուծոյ երկրպագելու եւ ուշադրութեամբ հետեւելու արարողութեան, քահանայէն օրհնութիւն հայցելու ժողովուրդին համար, Ս. Սեղանէն ստանալ Քրիստոսի յայտնութեան աւետիսը եւ զայն ողջոյնով փոխանցել ժողովուրդին: Իսկ արարողութեան լրումին Փրկչին մարմինն ու արիւնը ճաշակելու:

**ՃՐԱԳ ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ**  
**ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան**



**ԲՈՒ ԽՍՐԷՐ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆՇՈՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)**

**ՃԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 52**

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

Ես. 41.4-14: Եբր. 7.11-25 : Ղկ. 19.12-28

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 19.12-28**


Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով, որ ժողովուրդը կը կարծէ՝ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.-

«Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնելը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձա՛ս»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք, հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չենք ուզեր, որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»: Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզի տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզի ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես, ինչ՝ որ փուկ չէ եւ կը հնձես, ինչ՝ որ չես սերմանած»: Տէրը անոր ըսաւ. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր, որ կ'առնեմ, ինչ՝ որ իմս չէ եւ կը հնձեմ, ինչ՝ որ չեմ սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ, թէ վերադարձիս զայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք, - ըսաւ ան, - ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր՝ որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէ՛ք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք գանձմէ՛ք»:

Այս խօսքերը ըսել ետք Յիսուս շարունակեց իր նամբան դէպի Երուսաղէմ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ



Սուրբ Ստեփանոս նախավկան առաջին դարուն ապրած ֆրիստոնեայ է՝ առաջին նահատակը, որ իր արիւնը թափեց Յիսուս Գրիստոսը Աստուծոյ Որդի դաւանելու համար: Յիսուսի 72 աշակերտներէն մէկն է ան, որ վեց ընկերներուն հետ Պետրոս առաքեալ առաջին սուրբ սեղանին սպասաւոր կարգեց: Ս. Ստեփանոսի մասին Ս. Գիրքը կ'ըսէ, որ ան Աստուածային «շնորհով ու զօրութեամբ» լեցւած էր, «... ժողովուրդին մէջ զարմանալի գործեր եւ մեծ հրաշքներ կը գործէր» (Գրծ. 6.8): Ան Սուրբ Հոգիին զօրութեամբ լեցուած կը ֆարոգէր Յիսուս Գրիստոսը, որուն հետեւանքով արտասահմանէն եկած հրեաները, Երուսաղեմացի ժողովուրդը, ֆահանայատներն ու օրէնսգէտները գրգռեցին սուրբին դէմ, որոնք գայն բարձրագոյն ատեանին յանձնեցին: «Եւ սուտ վկանք բերին, որոնք կ'ըսէին՝ այս մարդը անդադար կը հայհոյէ սուրբ տեղին ու օրէնքին դէմ: «...Եւ բոլոր անոնք, որոնք նստած էին ատեանին մէջ, անոր նայելով տեսան, որ անոր դէմքը հրեշտակի կը նմանէր» (Գրծ. 6.13-15):

Պատասխանելով իրեն ուղղուած այս գրպարտութեան, Ստեփանոս նախավկան ատեանին մէջ սկսաւ Սուրբ Հոգիով մեկնել Հին Կտակարանը ըսելով, թէ հին մարգարէներ վկայած են Արդարին, Մեսիային՝ Յիսուս Գրիստոսի գալուստին մասին: Ու եզրափակելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր անոնց, որոնք սկիզբէն իսկ պատմեցին Արդարին գալուստին մասին, զոր մատնողն ու սպաննողը դուք եղաք, դուք՝ որ հրեշտակներու հրամանով օրէնքը ստացաք, սակայն գայն չգործադրեցիք» (Գրծ. 7.52-53):

Ստեփանոս Նախավկան ֆարկոծած ու սպաննած են Երուսաղեմի շրջակայքը, մինչ նոյն պահուն ան ըսած է. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ մարդու Որդին Աստուծոյ աջ կողմը կանգնած» (Գրծ. 7.55):

Ս. Ստեփանոս առաջին նահատակն է, որուն արեան հեղումով նամբան կը բացուի հետագայ դարերու բոլոր վկաններուն ու մարտիրոսներուն:

Հայ եկեղեցին Ս. Ստեփանոսի յիշատակը կը տօնէ մեծ տօներու հետ՝ Դեկտեմբեր 25-ին կամ անոր յաջորդող օրը (Եթէ 25 Դեկտեմբերը Կիրակի կամ պահոց օր հանդիպի):

Այս առիթով կը շնորհաւորենք Ստեփան անուն ունեցող մեր գաւակները մաղթելով բարի անուանակոչութիւն բոլորին:

# Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

## ՃԵՏԵՒԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՅԼՆԵՐՈՒՄ

Երբ Յիսուս քաշուեցաւ ժողովուրդէն՝ ժողովուրդը քաշեց ետէր: Ժողովուրդը աւելի սկսաւ կապուիլ Քրիստոսի յատկապէս Յովհաննէս Մկրտիչի նահատակութենէն ետք: Յովհաննէս դրախտ մեկնեցաւ, եւ Յիսուս դարձած էր միակ յոյսը Հրեայ ժողովուրդին: Երբ Յիսուս շարժեցաւ դէպի ամալի վայրերը՝ ամբողջ ժողովուրդը հետը շարժեցաւ: Երբ Յիսուս ուզեց երթալ տեղ մը, ուր հաց եւ ջուր չկար՝ ժողովուրդը ուզեց հետը երթալ:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Երբ մեր երկնաւոր Թագաւորը տեղ մը երթայ՝ իր թագաւորութեան անդամները պէտք է հետեւին իրեն: Երբ մեր Ուխտի Տապանակը՝ Քրիստոս շարժի, պէտք է հետը շարժինք եւ երբ կանգ առնէ՝ պէտք է հետը կանգ առնենք (Յեւ. 3.3): Զվախանանք հետեւելու իր քայլերուն, թէկուզ ան մեզ առաջնորդէ փորձութեան անապատներէն: Երբ ան մեզ կ'առաջնորդէ դժուարին ճամբաներէ՝ չընկրկինք դժուարութեանց դիմաց եւ ամուր քայլերով հետեւինք իրեն:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԲՈՂՈՐԻՆ

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

## ԵՐԲ ԿՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԿ ԹԷ ԿԱՏՈՒԾՈՅ ԱՉՔԻՆ ԻՆՉ Է ՃԵՄԱՐԻՑ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 49

Լսեցէ՛ք դուք՝ բոլոր ժողովուրդներ, ականջ տուէ՛ք, դուք՝ բնակիչներ ամբողջ աշխարհի: Բոլորդ անխտիր՝ ռամիկներ ու մեծամեծներ, հարուստներ ու աղքատներ: Ինչ որ պիտի ըսեմ՝ իմաստութիւն է, սիրտէս բխած խորհուրդները՝ ողջմտութիւն: Օրինակ մը պիտի առնեմ, եւ քնարիս նուագին հետ անոր խորհուրդը պիտի բացատրեմ:

Ես վախ չեմ գգար, երբ չար օրեր կու գան, եւ նեգաւոր թշնամիներ ամէն կողմէ կը պաշարեն զիս: Մարդիկ՝ որոնք իրենց ստացուածքներուն կը վստահին, իրենց մեծամեծ հարստութեամբ կը պարծենան: Արդարեւ հարստութիւնը չի կրնար մարդս փրկել, չի կրնար կեանքը գնել Աստուծմէ, որովհետեւ մարդու կեանքը շատ թանկագին է, եւ ռեւէ փրկանք բաւարար չէ՝ անոր անվախճան կեանք պարգեւելու, մահուան ձեռքէն ազատելու: Կը տեսնես, թէ իմաստունն ալ կը մեռնի, յիմարն ու անմիտն ալ կը կորսուին, ուրիշներուն ձգելով ստացուածքներ: Ինչքան ալ հողեր ունենան իրենց անունով՝ գերեզմանը կը դառնայ անոնց մնայուն տունը, անոնց բնակարանը՝ բոլոր ժամանակներուն:

ԱՂՕԹԵՆՔ ՍԱՂՄՈՍԱԿԻՐՔԷՆ